ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թողարկողի անվանումը՝ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերություն:

«Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	50 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	5 000 000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 5.75%
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա,
Թողարկման ամսաթիվ	11.09.2017թ.
Տեղաբաշխման ժամկետ	11.09.2017թ. – 17.11.2017թ.
Տեղաբաշխող	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռքբերել «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ տեղաբաշխման ավարտից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում (ցուցակումից հետո) մասնավորապես «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռքբերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի և բանկային հաշիվներ բացել, համապատասխանաբար, «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում և «Յունիբանկ» ԲԲԸ-ում: «Յունիբանկը» համդիսանում է Հաշվի օպերատոր, հետևաբար բոլոր հաշիվները հնարավոր կլինի բացել հենց բանկում:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	11.09.2020

Ծանուցում

«Յունիբանկ» ԲԲԸ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով.

Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում՝ 11.12.2017թ.

Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում՝ 11.03.2018թ.

Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում՝ 11.06.2018թ.

Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում՝ 11.09.2018թ.

Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում՝ 11.12.2018թ.

Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում՝ 11.03.2019թ.

Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում՝ 11.06.2019թ.

Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում՝ 11.09.2019թ.

Արժեկտրոնային եկամուտների իններորդ վճարում՝ 11.12.2019թ.

Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում՝ 11.03.2020թ.

Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում՝ 11.06.2020թ.

Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում՝ 11.09.2020թ.

Արժեկտրոնային եկամտի, ինչպես նաև մարման գումարը վճարվում է վճարման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ կազմված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա «Յունիբանկ» ԲԲԸ-ում՝ պարտատոմսերի անվանական արժեքին հավասար գումարները ներդրողների բանկային համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ ուսումնասիրել ծրագրային ազդագիրը (գրանցված է 22.03.2017թ. թիվ 1/213 Ա որոշմամբ), դրա լրացումները և թողարկման վերջնական պայմանները:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները և Վերջնական պայմանները թղթային տարբերակով «Յունիբանկ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակում (ք.Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5) և մասնաճյուղերում (հասցեները տես բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am), իսկ էլեկտրոնային տարբերակը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ www.unibank.am:

«Յունիբանկ» ԲԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հոկտեմբերի 9-ին ժամը 11:00-ին Գեղարքունիքի մա[rz]
Վարսերի համայնքապետարանում տեղի կունենա Վարսեր համայնք վար[չական]
կան տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողակտոր[ների]՝ 05-086-0203-0004 ծածկագրով 1,3504 հա, 05-086-0140-0004 ծածկագր[ով]
0,8106 հա արոտավայրերի եւ 05-086-0175-0039 ծածկագրով 0,35 հա վա[րե]լահողի վարձակալության մրցույթ Արոտավայրի 1 հա-ի մեկնարկային գի[նը]
4000 դրամ է, վարելահողի 1 հա-ի մեկնարկային գինը՝ 10000 դրամ: Մրց[ույ]թի մասնակցության գումարը՝ 1000 դրամ, նախավճարը՝ մեկնարկային գ[նի]
5%-ը: Մրցույթի դրված հողերի նկատմամբ սերվիտուտներ եւ այլ սահմանա[]փակումներ չկան: Մրցույթի մասնակցության հայտերը ընդունվում են մի[]չեւ 2017 թվականի հոկտեմբերի 5-ը ժամը 17:00: Լրացուցիչ տեղեկությու[]ների համար դիմել Վարսերի համայնքապետարան: Հեռ. 0261-2-74-63

Վարսերի համայնքապետա[րան]

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսն[երի] կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարությ[ան] 07.03.03թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է Արարատի մարզի Հայկավան համայնքի վարչական տարածքում ոռոգման նպատակով՝ ս[տո]րերկրյա ջրային ռեսուրսից՝ 47.0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախ[ա]գիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշա[կ]ման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող [են] աշխատանքային օրերին ժամը 17-ից 18-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման [գործակալության] ղեկավարության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի [վե]րաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթ[ղթի] քննարկումը տեղի կունենա 2017 թվականի սեպտեմբերի 12-ին ժամը 16.00-ին, Կ[առա]վարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարությ[ուն]

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննությ[ան] մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարությ[ան] 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2017թ. օգոստոսի 29սե[պ]տեմբերի 26-ին, ժամը 12:30-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվի Սոթքի գյուղապ[ե]տարանում տեղի կունենան «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի կողմից շրջակա մ[ի]ջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված ՀՀ Գեղարքունիք[ի] մարզի Սոթքի ոսկու հանքավայրի ստորգետնյա եղանակով արդյունահանման շ[րջ]ակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբ[ե]րյալ հանրային քննարկումներ (2-րդ փուլ):

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ՀՀ բնապահպանության նախարա[րու]թյան պաշտոնական կայքում (mnp.am), ք. Երեւան, Կոմիտաս 29 հասցեում, հե[ռ.] 22-02-18, 22-15-68, 077473275:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մա[]սին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն), ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014[թ.] Ն 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2017թ. սեպտեմբերի 22-ին ժամը 12:00-ին Հ[Հ] Վայոց Ձորի մարզի Վարդահովիտի համայնքապետարանում տեղի կունենան «Գեշ[]ՀԷԿ» ՍՊԸ կողմից ներկայացված «Գեշիկվանք» ՓՀԷԿ-ի կառուցման նախնական գնա[]հատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ (2-րդ հանրային քննարկում):

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ, ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում, ՀՀ բնա[]պահպանության նախարարության պաշտոնական կայքում՝ www.mnp.am, Վարդահովի[տի] համայնքապետարանում, հեռ. 010221568, 010220218:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կոնֆերանսի կազմակերպման եւ անցկացման մասին

2017թ. սեպտեմբերի 06-ին Հակոբ Մարտիրոսյանի սնանկության գործով կառավարիչ Վ.Ավագյանի կողմ[ից] նշանակված կոնֆերանսը չի կայացել հայց չլինելու պատճառով: 2017թ. հոկտեմբերի 04-ին ժամը 12:00-ին Հակոբ Մարտիրոսյանի սնանկության գործով կառավարիչ Վ. Ավագյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի [illegible] [illegible] ք.Արմավիր, Հանրապետության 41 հասցեում կանցկացվի սնանկ ճանաչված Հակոբ Մարտիրոսյանի [illegible]

[illegible]